Հեղինակ՝ Աստղիկ Բալայան

ՄԵԴԻԱ ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

ՏԱՐՐԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ

ՀՏԴ 070:316.77:373.3(07)
ԳՄԴ 76.0+60.524.22+74.2գ7
Բ 200

Ձեռնարկը երաշխավորված է որպես ուսումնական նյութ՝ ԿԳՄՍ նախարարի N 03/09.3/3205-2026 հրամանով:

ՄԵԴԻԱ
ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆ

Հեղինակ՝
Աստղիկ Բալայան

Բ 200 Մեդիագրագիտությունը տարրական ծրագրում / Ա. Բալայան.- Եր.: Մեդիա նախաձեռնությունների կենտրոն ՀԿ, 2026-28 էջ:

Խմբագրական կազմ
Գեղամ Վարդանյան
Անի Եղիազարյան
Լուսինե Գրիգորյան
Հերիքնազ Հարությունյան
Նունե Սարգսյան

Ձևավորումը՝ Նատալի Հարությունյանի
Որոշ պատկերների պատրաստման համար օգտագործվել են արհեստական բանականության գործիքներ:

Գրքույկը մշակել է Մեդիա նախաձեռնությունների կենտրոնը:
Այն «Մեդիագրագիտություն. հավելված» գրքույկների շարքի մաս է:

Շարքում ներառված են հետյալ թեմատիկ գրքույկները.

Աստղիկ Բալայան
«Մեդիագրագիտությունը տարրական ծրագրում»

Լուսինե Գրիգորյան
«Մեդիագրագիտությունը գրադարանում»

Գեղամ Վարդանյան, Օֆելյա Սիմոնյան
«Ճանաչել ու դիմագրավել ապատեղեկատվությանը. դեպքերի քննարկում»

Տպագրված է «Ասողիկ» հրատարակչությունում

ISBN 978-9939-1-2252-6 **© Մեդիա նախաձեռնությունների կենտրոն, 2026**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

4 Ներածություն

5 Տարրական ծրագրում մեդիագրագիտության ինտեգրման ակնկալվող վերջնարդյունքներ

8 Մեդիագրագիտության ինտեգրման մոտեցումները տարրական ծրագրում

16 Դասերի օրինակներ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մեդիագրագիտության այս ձեռնարկը տարրական ծրագրում (1-4-րդ դասարաններ, 6-10 տարեկան սովորողներ) դասավանդվող ուսուցիչներին օգնելու համար է:

Ձեռնարկը ներառում է մեդիագրագիտությունը տարրական ծրագրում զարգացնելու մոտեցումներ, խաղային մեթոդներ և գործնական վարժություններ պարունակող դասերի օրինակներ:

1

ՏԱՐՐԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ ՄԵԴԻԱԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԱԿՆԿԱԼՎՈՂ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Հանրակրթության պետական չափորոշչով (ՀՊՉ) առանձնակի դեր և կարևորություն է տրվել մեդիագրագիտությանը, և առանցքային ութ կարողունակություններից մեկը սահմանվել է որպես թվային և մեդիա կարողունակություն: Այն տարրական ծրագրում ներկայացված է մի քանի ընդհանրական վերջնարդյունքների տեսքով, համաձայն որոնց՝ ծրագրի շրջանավարտը պետք է՝

(12) համատեղ կամ ինքնուրույն իրականացնի պարզ հետազոտական աշխատանքներ, անի եզրակացություններ՝ հիմնվելով ստացված տվյալների և դիտարկումների վրա, փաստերը օգտագործի իր գաղափարները հիմնավորելու համար և ստացված արդյունքը ներկայացնի պարզ գիտական բառապաշարով,

(14) օգտվի պարզ թվային սարքերից, համակարգչային ծրագրերից, հավելվածներից, աջակցող սարքերից և սարքավորումներից, կարողանա օգտագործել դրանք՝ պահպանելով անվտանգության կանոնները,

(15) օգտագործի տարբեր եղանակներ թեման պատկերավոր և ընկալելի ներկայացնելու համար,

(23) ճանաչի տեղեկատվության աղբյուրների ու միջոցների բազմազանությունը:

Այս ընդհանրական վերջնարդյունքներն ավելի կոնկրետանալու և չափելի են դառնալու տարբեր ուսումնա-

կան առարկաների շրջանակում՝ սահմանելով տարրական ծրագրում մեդիագրագիտության հիմնական խնդիրները.

◉ **Զարգացնել քննադատական մտածողություն.** օգնել սովորողներին՝ տարբերակել վստահելի և ոչ վստահելի տեղեկատվությունը:

◉ **Խրախուսել մեդիայի պատասխանատու սպառումը.** սովորողների պատասխանատու վարքագիծ ձևավորել առցանց և անցանց մեդիա միջավայրերում:

◉ **Խթանել հարցեր տալու փորձառությունն ու հետաքրքրասիրությունը.** սովորողների մեջ զարգացնել մեդիաբովանդակությանը հարցեր տալու կարողությունը՝ հիմք դնելով մեդիագրագիտության մյուս հմտությունների համար:

◉ **Աջակցել դասավանդվող առարկաներում մեդիագրագիտության ինտեգրմանը.** խթանել ուսուցիչների կողմից տարբեր առարկաներում (Մայրենի, Մաթեմատիկա, Ես և շրջակա աշխարհը և արվեստի բնագավառի առարկաներ) արդյունավետ մեթոդների և գործիքների կիրառումը:

2

ՄԵԴԻԱԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ

Մեդիագրագիտությունը վերառարկայական հմտություն է, որը կարող է զարգանալ ինչպես դպրոցից դուրս, այնպես էլ դպրոցում՝ տարբեր առարկաների ուսումնասիրման շրջանակում: Կրտսեր դպրոցական տարիքում (6 - 10 տարեկան) մեդիագրագիտության զարգացումը ներառում է աշխատանքի հետևյալ ուղղություններ.

◉ **Հրույցներ մեդիայի մասին:** Մեդիայի հիմնական տեսակների (գիրք, մամուլ, հեռուստատեսություն) շուրջ քննարկումները, այդ ամենի մասին երեխաների կարծիքն ու զգացումները ճշտելը օգնում են ձևավորել վերաբերմունք ու ճիշտ վարքագիծ:

◉ **Ընթերցանություն և վերլուծություն:** Գրական ու ոչ գրական տեքստերի, տեղեկատվական նյութերի ընթերցումն ու վերլուծությունը սովորողների մեջ զարգացնում են ընթերցողական որակներ, քննադատական մտածողություն, ինֆորմացիայի հավաստիությունը որոշելու և ներկայացման եղանակ ընտրելու կարողություններ:

◉ **Ստեղծագործական աշխատանքներ:** Ստեղծելով իրենց սեփական պատմությունները, գովազդները կամ հաղորդումները, այնուհետև քննարկելով դրանք մեծ ու փոքր խմբերում՝ սովորողները գիտակցում են տեղեկատվության նպատակը, բովանդակությունն ու ենթատեքստը:

◉ **Խնդիրների լուծում:** Թվային աշխարհի անախորժություններից ու, առհասարակ, ոչ ճիշտ տեղեկատվության վտանգներից խուսափելու մասին քննարկում-

ներն ամրացնում են մեդիայի կիրառման հարցում սովորողների դիմադրողականությունը:

◉ **Մեդիայի ուսումնասիրում:** Ուսումնասիրելով տարի-քին համապատասխան նյութեր տարբեր մեդիա աղբյուրներում՝ սովորողների մեջ ձևավորում ենք ընտրություն կատարելու, գիտելիքները հարստացնելու կարողություն, ինչպես նաև զարգացնում ենք քննադատական մտածողությունը:

Այս աշխատանքները երեխաներին օգնում են լավ հասկանալ՝ ինչ է մեդիան, իսկ տարբեր մեթոդների ու գործիքների կիրառումը խթանում է նրանց լեզվական և դատողական հմտությունները:

Սակայն պետք է նշել, որ մեդիագրագիտության զար-գացման լավագույն տարբերակը ամենօրյա աշխա-տանքն է: Միայն այդպես՝ մեդիագրագետ լինելը կդառ-նա կյանքի հմտություն, սովորելու, աշխատելու և ապրելու մշակույթ: Իհարկե, կարևոր և արդյունավետ է տարբեր ուսումնական առարկաների շրջանակում սահմանված որոշակի վերջնարդյունքների ձևավորումը, սակայն վերառարկայական հմտություններ ձևավորելու նպա-տակով կարելի է մշակել շարունակական գործո-ղությունների ձևաչափ ու համապատասխան գործիքներ:

Սովորողները իրապես մեդիագրագետ կդառնան, երբ պարզապես սպառող լինելուց վերածվեն մեդիա ստեղծողների: Ինչ խոսք, դեռևս կյանքի առաջին

տարիներից յուրաքանչյուր երեխա տանը և տնից դուրս ստանում է տեղեկություններ (նկարներ, ֆիլմեր – մուլտֆիլմեր, գովազդ, մանկական գրքեր, մեծահասակների խոսք և այլն), ինչպես նաև ինքն է ստեղծում բովանդակություն (լուսանկարներ, խոսք/տեքստ և այլն), սակայն միայն նպատակաուղղված, հետևողական աշխատանքի արդյունքում է այդ գործընթացը դառնում չափելի ու կանխատեսելի:

1 Դասարանական տեղեկատվական համակարգ

Դասարանի մի հատվածում՝ պատի կամ սեղանի վրա ստեղծել յուրօրինակ «վահանակ», որի վրա կան ինֆորմացիայի ստացման տարբեր աղբյուրներ կամ միջոցներ՝ թերթ/ամսագիր, հեռուստացույց, ռադիո, հեռախոս, համակարգիչ, գիրք, ...



Վահանակի վրա առանձնացնել տարբեր բաժիններ, օրինակ՝ հաղորդումների վերնագրեր («Դասարանական լուրեր», «Ձգտի՛ր առաջ և վեր», «Ինչ են պատմում հեքիաթները» և այլն) կամ հավելվածներ (Telegram,

Instagram և այլն), որոնց միջոցով սովորողները կարող են ավելի կոնկրետացնել իրենց ընտրությունը:

Վահանակի յուրաքանչյուր բաժնի համար ձևավորել այն սպասարկող խումբ: Օրինակ, եթե սովորողներն ընտրում են «գիրք» գործիքը («սեղմում են» նկարի վրա կամ կպչուն թերթիկով նշում են իրենց հարցը կամ առաջադրանքը), համապատասխան խումբը անցնում է գործի և որոշ ժամանակ անց ներկայացնում է արդյունքը: Ստացվում է, որ դասարանի յուրաքանչյուր անդամ ներգրավված է մեկ կամ մի քանի աշխատանքային խմբում և շաբաթվա ընթացքում ունի որոշակի զբաղվածություն:

Երբ որևէ առարկայի ուսումնասիրման ժամանակ ինչ-որ տեղեկության ստացման կամ ստուգման կարիք է լինում, սովորողները մոտենում են «վահանակին», ընտրում աղբյուրը, հետո նոր կատարում են անհրաժեշտ գործողությունները կամ դրանք պատվիրակում համապատասխան աշխատանքային խմբին: Օրինակ, պետք է ճշտել «գազավորված ըմպելիքները մաքրում են օրգանիզմը» միտքը: Սովորողները որոշում են, թե ո՞ր աղբյուրի միջոցով կարելի է արագ ու հիմնավոր կերպով ճշտել այս տեղեկատվությունը, հետո նոր՝ իրենք կամ համապատասխան խումբը լուծում է տալիս հարցին:

Դերեր և անելիքներ

Կարևոր է «վահանակի» յուրաքանչյուր բաժնով զբաղվող խմբի համար հստակ դերերի և գործառույթների սահմանումը: Օրինակ՝

ԹԵՐԹԻ ԵՎ ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ				
	ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՐ ԵՎ ԺԱՄԵՐ՝ երկուշաբթիից երկուշաբթի, լուսաբացից լուսաբաց			
ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ	**ԽՄԲԱԳԻՐՆԵՐ**	**ԼՐԱԳՐՈՂՆԵՐ**	**ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉՆԵՐ**	**ԴԻԶԱՅՆԵՐՆԵՐ**
պատասխանատու է վերջնական նյութերի համար	աշխատում են հոդվածների և նյութերի վրա, ստուգում փաստերը, բովանդակությունը	հավաքում են տեղեկություններ, գրում հոդվածներ, վարում հարցազրույցներ	ապահովում են լուսանկարներ հոդվածների համար	ապահովում են թերթի կամ ամսագրի ձևավորումը, գրավչությունը

* Դերերը կարող են սահմանվել որոշակի ժամկետով, որից հետո կարող են փոխվել, որպեսզի բոլոր սովորողները ստանան համապատասխան հմտություններ:

2 Հերոսները մեդիագրագիտության դասընթացում

Հերոսներն էական դեր ունեն կրտսեր դպրոցականների կրթության մեջ և կարող են մեծ ազդեցություն ունենալ նրանց զարգացման վրա՝ ձևավորելով արժեքներ, հաղորդելով խանդավառություն, ներշնչելով վստահություն և արթնացնելով քաղաքացիական գիտակցություն:

Լուրբերիկ – Ես ապահովում եմ թարմ ու հավաստի տեղեկատվություն, հոգում եմ այն մասին, որ դուք առաջինը լինեք տեղեկացված, այսինքն՝ ավելի ուժեղ: Տեղեկությունների հոսքն ու բազմազանությունը սահմաններ չունեն, բայց ես ձեզ ներկայացնում եմ միայն ամենակարևորը:

Փաստճշտիկ – Ես ապահովում եմ ձեր տեղեկատվական անվտանգությունը, կանխում եմ վտանգները, ամեն ինչ ճշտում եմ վստահելի աղբյուրներից ու ներկայացնում հստակ տեղեկատվություն, իհարկե՝ համագործակցելով իմ ընկերների հետ:

Հարցդարձիկ – Ես կասկածի տակ եմ դնում ամեն ինչ, ու իմ մեջ ծնվում են հարցեր՝ իսկապե՞ս, մի՞թե. դե, չեմ կարող հավատալ ամեն տեսածի ու լսածի: Ու միշտ հակադարձում եմ՝ **«ո՞վ է...»**, **«ո՞րն է...»**, **«ո՞ւմն է...»**, **«ինչպե՞ս»** և **«ինչո՞ւ»** հարցերով, ու ճշգրտում տեղեկատվությունը:

3 Գործունեության ձևերը մեդիագրագիտության ձևավորման ժամանակ

Տարրական դպրոցում մեդիագրագիտության ինտեգրումը նպատակահարմար է կազմակերպել բազմազան ու բազմաշերտ աշխատանքներով, սովորողների ակտիվ գործունեությունը խթանող տարբեր ձևերի կիրառմամբ.

1. պատմության խաղարկում,
2. պատկերազարդում,
3. ինքնակենսագրական շարադրանք,
4. խնդիրների լուծում,
5. պատմության շարունակության հորինում,
6. թեմատիկ քարտերի պատրաստում,
7. հերոսների բնավորության վերլուծություն,
8. խորհրդանիշների քարտեզի ստեղծում,
9. պատմությունների համեմատական վերլուծություն,
10. խաղեր,
11. խմբային քննարկումներ,
12. ժողովրդական մանրապատում ստեղծագործությունների ընթերցում,
13. պատի թերթի վարում, երգերի հորինում, փոփոխում:

ԴԱՍԵՐԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ 3

Դաս 1

Առարկան	Մայրենի		
Դասի թեման	«Լուր. հավատում եմ, չեմ հավատում»		
Դասի նպատակը	Տևողությունը	Տարիքային խումբը	Անհրաժեշտ ռեսուրսները
▸ ձևավորել լուրը ստուգելու սովորություն ▸ զարգացնել լուրը տարբեր միջոցներով ստուգելու կարողություն	45 ր	8 - 9 տարեկան	▸ սուտասե-լուկներ ▸ նկարներ ▸ լուրերի խմբեր
Կապը տարրական ծրագրի առարկաների հետ	Ես և շրջակա աշխարհը		
Կապը ՀՊՉ-ի ընդհան-րական վերջնար-դյունքների հետ	Աշակերտը պետք է՝ ▸ **S23** - ճանաչի տեղեկատվության աղբյուրների ու միջոցների բազմազա-նությունը, ▸ **S25** - ճանաչի և համադրի տարբեր զգայարաններով ստացած տեղեկությունները, դրանք կիրառի աշխարհաճանաչողության գործում, ▸ **S26** - արտահայտի սեփական մտքերը, զգացմունքները, կարիքները և ցանկությունները, գիտակցի իր յուրահատուկ լինելը:		

Դասի ընթացքը

1 **Հետաքրքրության արթնացում/խթանում. «Սուտասելուկ»**

▸ Ուսուցիչը սովորողներին բաժանում է 4 – 5-հոգանոց խմբերի, յուրաքանչյուր խմբի տալիս է մեկ սուտասելուկ և առաջարկում ցույց տալ, թե որ մտքերի համար են դրանք սուտասելուկ կոչվում:

▸ Սովորողները խմբով կարդում են և առանձնացնում այն մտքերը, որոնք չափազանցված են կամ ճիշտ չեն:

▸ Խմբերը բարձրաձայն կարդում են իրենց սուտասելուկ-ները, ներկայացնում դուրս բերած մտքերը, իսկ մյուս խմբերը լրացնում են, եթե ասելիք ունեն:

▸ Վերջում ուսուցիչն առաջարկում է քննարկել նաև, թե ինչ զգացմունքներ ունեցան սուտասելուկները կարդալիս՝ վախեցան, բարկացան, զարմացան, ուրախացան, տխրե-ցին և այլն: Ինչո՞ւ են մարդիկ ստեղծում սուտասելուկներ:

Մաղով միսը աղացի, Մսաղացով՝ ալյուրը, Եվ ճոխ սեղան բացեցի, Երբ պատրաստ էր ապուրը: Որդիս կերավ՝ հավանեց, Ասաց. «Համեղ ճաշ է սա, Վաղն էլ կեփես մի կաթսա Ձմերուկով հարիսա»:	Ես մի անգամ Սևանում Տեսա հսկա կապույտ կետ. Երգում էր ու լողանում, Խաղում էր մեծ նավի հետ: Վերջն էլ նավին կուլ տվեց, Իջավ ջրի խոր հատակ. Սա ո՛չ սուտ է, ո՛չ կատակ:
Մի օր կանաչ բացատում Նապաստակն էր թռչկոտում: Եղջյուրները իր սրեց Ու ինձ վրա հարձակվեց: Ես ուշաթափ վայր ընկա Մռնչոցից կատաղի: Ես ոչինչ չեմ հնարել... Չե՞ք հավատում, դե՛ հարցրեք Որսորդներին մեր թաղի:	Քարերի մեջ ցանեցի Մի քիչ գարի ու կորեկ Ու աշնանը քաղեցի Ձմերուկի առատ բերք: Կատուն սայլին լծեցի Ու բերքս տուն բերեցի: Ողջ ձմեռը կուշտ կերանք, Այ քեզ հրաշք վարուցանք: **Հեղինակ՝** **Սուրեն Մուրադյան**

2 Խաղ՝ «Հավատում եմ, չեմ հավատում

Ուսուցիչը սովորողներին ասում է մտքեր, որոնց նրանք արձագանքում են՝ «հավատում եմ» կամ «չեմ հավատում»:

Օրինակներ.

- Այսօր արևը ծագեց 6:20 րոպեին:
- Կատուները կարող են լողալ:
- Հայաստանը ծով չունի:
- Սարդերն ունեն 10 ոտք:
- Գետի ուղղությունը կարելի է փոխել:
- Կան մրգեր, որ կորիզ չունեն:

Այնուհետև քննարկում են՝ ինչու որոշ մտքերի հավատում են, իսկ դրանց մի մասին՝ ոչ:

3 Քննարկում՝ ինչպես ստուգել լուրը

Սովորողները քննարկում են հետևյալ հարցերը.

- Ի՞նչ է լուրը:
- Ի՞նչ տարբերություն լուրի, փաստի և կարծիքի միջև:
- Ի՞նչ է նշանակում «կեղծ լուր»:
- Ինչո՞ւ են կեղծ լուրեր տարածվում:
- Ինչպե՞ս ստուգել՝ լուրը կե՞ղծ է, թե՞ ճիշտ:
- Ի՞նչ վտանգներ ունեն չճշտված լուրերը:

4 Խմբային աշխատանք՝ «Լուրեր թղթապանակից»

Սովորողներն աշխատում են 4 – 5-հոգանոց խմբերով: Յուրաքանչյուր խմբի տրվում է լուրերով մեկ թղթապանակ: Խումբը ծանոթանում է լուրերին և առանձնացնում նրանք, որոնք կեղծ չեն:

Լուրերը ստուգելու համար սովորողներն օգտվում են այդ պահին հասանելի տարբեր միջոցներից, օրինակ՝

- քննարկում են՝ դա հնարավո՞ր է,
- հարցնում են վստահելի մարդու,
- նայում են մեկ այլ աղբյուր և այլն:

5 Դերային խաղ՝ «Մենք եթերում ենք»

Խմբերը հերթով «դուրս են գալիս եթեր» և ներկայացնում են լուրեր, իսկ մյուսները, որպես սպառողներ, գնահատում են ներկայացված լուրերը՝ ճշմարտացի՞ են, կեղծ, թե՞ պետք է ստուգել:

6 Ամփոփում՝ «Ի՞նչ սովորեցի, ո՞րն է լուրը բացելու իմ բանալին»

Ուսուցիչն առաջարկում է, որ յուրաքանչյուր սովորող ձևակերպի այն կարևոր միտքը, որն օգնում է իրեն՝ գտնելու «լուրը բացելու իր բանալին»: Օրինակ՝

- «Ես մինչև չստուգեմ, չեմ հավատում ամեն ինչին»:
- «Ես հարցնում եմ՝ ո՞վ է ասում, որտե՞ղ է գրված, ինչի՞ մասին է...»:
- «Ես նախ կասկածում եմ, հետո սկսում եմ գործել՝ ինչպես Փաստճշտիկը»:
- Այլ...

Դաս 2

Առարկան	Կերպարվեստ		
Դասի թեման	«Ես էլ եմ ուզում լինել հայտնի կամ էկրանից այն կողմ»		
Դասի նպատակը	**Տևողությունը**	**Տարիքային խումբը**	**Անհրաժեշտ ռեսուրսները**
▸ ձևավորել լսածը, տեսածը վերլուծելու և գնահատելու կարողություն ▸ զարգացնել մեդիան նպատակային օգտագործելու կարողություն	45 ր	8 - 10 տարեկան	▸ տեսանյութեր հայտնի մարդկանց մասին ▸ նկարներ ▸ նկարելու նյութեր՝ թղթեր և մատիտներ
Կապը տարրական ծրագրի առարկաների հետ	▸ Մայրենի ▸ Երաժշտություն		
Կապը ՀՊՉ-ի ընդհանրական վերջնարդյունքների հետ	Աշակերտը պետք է՝ ▸ **S23** - ճանաչի տեղեկատվության աղբյուրների ու միջոցների բազմազանությունը, ▸ **S25** - ճանաչի և համադրի տարբեր զգայարաններով ստացած տեղեկությունները, դրանք կիրառի աշխարհաճանաչողության գործում,		

	▸ **S26** - արտահայտի սեփական մտքերը, զգացմունքները, կարիքները և ցանկությունները, գիտակցի իր յուրահատուկ լինելը:

Դասի ընթացքը

1 Հետաքրքրության արթնացում/խթանում. «Ովքե՞ր են հանրաճանաչ մարդիկ»

▸ Ուսուցիչը սովորողներին հարցնում է. «Ովքե՞ր են մեր օրերի հայտնի մարդիկ, որոնց դուք ճանաչում եք էկրանից»:

▸ Երեխաները նշում են երգիչների, բլոգերների, դերասանների, ֆուտբոլիստների և այլոց անուններ, ուսուցիչն այդ անունները գրում է գրատախտակին կամ պաստառին՝ ցույց տալով, որ բոլորի պատկերացումները տարբեր են, բայց հիշատակված բոլոր մարդիկ հաճախ երևում են էկրանին:

2 Ուսումնասիրություն՝ «Ի՞նչ ենք մենք տեսնում»

Ուսուցիչն առաջարկում է դիտել նկարներ ու կարճ տեսանյութ (եթե չկա դիտելու հնարավորություն, կարելի է պատմել) որևէ նշանավոր մարդու մասին, որն էկրանին միշտ ուրախ է ու հաջողակ, ժպտում է, սիրված է բոլորի կողմից, բայց կուլիսներում խոսում է իր դժվարություններից, երբեմն անվստահ է, հոգնած և այլն:

Դիտել նաև նկարներ ու կարճ տեսանյութ որևէ նշանավոր մարդու մասին, որի էկրանային ու իրական կյանքը ներդաշնակ է ու դուր է գալիս իրեն (եթե չկա տեսանյութ, կամ հնարավոր չէ դիտել, կարելի է ամեն ինչ կազմակերպել նկարներով ու զուգահեռ խոսքով):

Այնուհետև միասին քննարկում են մի շարք հարցեր, օրինակ՝

▸ Ի՞նչ տարբերություն էկրանի ու իրականության միջև:

▸ Ինչո՞ւ ենք մենք միայն լավ կողմերը տեսնում:

- Ի՞նչ դեր ունեն ժամանակակից միջոցները, այդ թվում՝ արհեստական բանականությունը այն ամենի մեջ, ինչ մենք տեսնում ու ընկալում ենք էկրանից:
- Ինչպե՞ս տարբերել իրականը և ոչ իրականը:

3 Դերային խաղ՝ «Հարցազրույց»

- Սովորողները բաժանվում են երեք խմբի՝ «Հայտնիներ» (իրենք են ընտրում իրենց կերպարը՝ բլոգեր, փոփ աստղ, նկարիչ, երգիչ, դերասան և այլն), «Լրագրողներ», «Երկրպագուներ»:
- Խմբերը նախապես պատրաստվում են դերային խաղին. լրագրողները միասին մշակում են հարցեր, որ ուղղելու են հայտնիներին, երկրպագուները քննարկում են՝ ինչպես են իրենց դրսևորելու հարցազրույցի ժամանակ, հայտնիները որոշում են իրենց կերպարները և այլն:
- Պատրաստվելուց հետո կազմակերպվում է հարցազրույցը, որի ժամանակ լրագրողները հարցեր են տալիս հայտնիներին նրանց հաջողությունների ու ձախողումների, դժվարությունների ու դժվար պահերին իրար օգնելու մասին և այլն: Օրինակ, կարող են հնչել այսպիսի հարցեր. «Ճի՞շտ է, որ հայտնի մարդիկ էլ սովորական մարդիկ են», «Ի՞նչն է հայտնի մարդկանց կյանքում սովորական, ինչը՝ անսովոր» և այլն:

4 Պատկերասրահ՝ «Ես եմ»

Ուսուցիչն առաջարկում է, որ յուրաքանչյուր սովորող նկարի ինքն իրեն և առանձին թերթիկի վրա ավարտի հետևյալ մտքերը.

- Ես ուժեղ եմ, որովհետև ...
- Ես յուրահատուկ եմ, որովհետև ...
- Ես ուրախանում եմ, երբ ...

Այնուհետև սենյակը վերածվում է ցուցասրահի. բոլորն իրենց նկարները փակցնում են պատին, իսկ նկարի մոտ՝ թերթիկը, ինչպես պատկերասրահներում են փակցնում նկարչի

աշխատանքը և մեկնաբանող ցուցանակը (եթե պատին ամրացնելու հնարավորություն չկա, կարելի է նկարները դնել սեղաններին, իսկ թերթիկները՝ կողքին)։

Սովորողները շրջում են պատկերասրահում, կամ ցանկացողները ներկայացնում են իրենք իրենց, պատմում իրենց հաջողությունների, յուրահատկությունների մասին։

5 Ամփոփում՝ «Ի՞նչ սովորեցի կամ ի՞նչ եմ մտածում այս պահին»

Ուսուցիչն առաջարկում է, որ յուրաքանչյուր սովորող ձևակերպի այն կարևոր միտքը, որ ստացավ դասից կամ որի շուրջ շարունակելու է մտածել։ Օրինակ՝

- «Հայտնի լինելը լավ է, բայց ամենակարևորն այն է, որ յուրաքանչյուրն ունենա իր նպատակներն ու արժեքները և առաջնորդվի դրանցով»։
- «Ոչինչ այնքան հեշտ ու հարթ չէ, ինչպես հաճախ ներկայացվում է էկրանից»։
- «Հայտնի լինել՝ դեռ չի նշանակում լինել ուրախ ու երջանիկ»։
- «Չեմ ուզում համեմատվել ուրիշների հետ»։
- «Ես կարող եմ կերտել իմ ճանապարհը»։
- Այլ …

Դաս 3

Առարկան	Ես և շրջակա աշխարհը		
Դասի թեման	«Մենք ստեղծում ենք մեդիա»		
Դասի նպատակը	**Տևողությունը**	**Տարիքային խումբը**	**Անհրաժեշտ ռեսուրսները**
▸ ձևավորել համոզմունք, որ իրենք ոչ միայն մեդիա սպառող են, այլ կարող են նաև ստեղծել մեդիա ▸ զարգացնել տարբեր նպատակներով պարզ մեդիանյութեր ստեղծելու հմտություն	45 ր	8 - 10 տարեկան	▸ տեսանյութեր ▸ նկարներ ▸ տպագիր և էլեկտրոնային նյութեր ▸ տեխնիկական միջոցներ
Կապը տարրական ծրագրի առարկաների հետ	▸ Մայրենի ▸ Երաժշտություն ▸ Կերպարվեստ ▸ Տեխնոլոգիա		
Կապը ՀՊՉ-ի ընդհանրական վերջնարդյունքների հետ	Աշակերտը պետք է՝ ▸ **S23** - ճանաչի տեղեկատվության աղբյուրների ու միջոցների բազմազանությունը,		

	▸ **S25** - ճանաչի և համադրի տարբեր զգայարաններով ստացած տեղեկությունները, դրանք կիրառի աշխարհաճանաչողության գործում, ▸ **S26** - արտահայտի սեփական մտքերը, զգացմունքները, կարիքները և ցանկությունները, գիտակցի իր յուրահատուկ լինելը:

Դասի ընթացքը

1 Հետաքրքրության արթնացում/խթանում՝ «Որտե՞ղ է մեդիան»

Ուսուցիչը ցույց է տալիս տարբեր նկարներ կամ առարկաներ՝ թերթ, հեռախոս, հեռուստացույց, պաստառ, սոցիալական ցանցի էջեր... և սովորողներին ուղղում է հարց. «Որտե՞ղ եք ամեն օր հանդիպում մեդիայի»:

Քննարկման արդյունքում հանգում են եզրակացության, որ մեդիան մեզ շրջապատում է ամենուր, այն առկա է մեր կյանքում, մենք այն կիրառում ենք, բայց նաև ստեղծում ենք՝ ակամա կամ նպատակային:

2 Քննարկում՝ «Ինչի՞ համար է մեդիան»

Ուսուցիչը հարցն ուղղում է սովորողներին և նրանց պատասխանները գրառում գրատախտակին կամ պաստառին: Օրինակ՝

- տեղեկացնում է,
- զվարճացնում է,
- համոզում է (գովազդ),
- հետաքրքիր է դարձնում կյանքը (պատմություններ, բլոգ և այլն),
- թելադրում է (ամենուր է, ու չես կարող խուսափել)
- այլ...

3 Խմբային ուսումնասիրություն՝ «Ստեղծում ենք մեդիա...»

Ուսուցիչը ներկայացնում է թեմաներ «Ես և շրջակա աշխարհը» առարկայից (օրինակ՝ «Ինչ է ընտանիքը», «Մեր դպրոցը», «Ծառերը մեր համայնքում», «Ընկերության մեր մոդելը», «Կենդանիների խնամք» և այլն), կամ սովորողներն իրենք են ընտրում թեմաներ:

Սովորողները բաժանվում են փոքր խմբերի: Յուրաքանչյուր խումբ ընտրում է նյութը ներկայացնելու ձևաչափ, օրինակ՝

- **լուսանկար + տեքստ** (պաստառ կամ պատմողական նկարագրություն),
- **փոքրիկ տեսանյութ** (մինչև 30 վայրկյան),
- **աուդիո հաղորդում** որոշված թեմայի շրջանակում (երեխաները ձայնագրում են հեռախոսով, օրինակ՝ «Մեր դպրոցի լուրերը» կամ «Օրվա խորհուրդը»),
- **նկարաշար** կամ **կոմիքս** (նկարի միջոցով պատմություն),
- այլ...

Կարևոր հանգամանք. Ուսուցիչն օգնում, ուղղորդում է երեխաներին, բայց հիմնական անելիքը նրանցն է:

4 Աշխատանքների ներկայացում

Յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իր ստեղծած նյութը, մյուսներն արձագանքում են՝ ինչ սովորեցի, ինչը դուր եկավ, ինչը կարելի է զարգացնել և այլն (կարևոր է փոխադարձ գնահատում իրականացնելու, նպատակային լսելու կարողությունները զարգացնելու առումով):

5 Ամփոփում՝ «Ի՞նչ սովորեցի», «Ի՞նչ եմ արդեն կարողանում», «Ի՞նչը կարևորեցի»

Ուսուցիչն առաջարկում է, որ յուրաքանչյուր սովորող ձևակերպի այն կարևոր միտքը, որ յուրացրեց դասից կամ ներկայացնի՝ ինչպես է իրեն զգում որպես մեդիա ստեղծող:

Օրինակ՝

- Ես այսպես կարող եմ ոչ միայն ճանաչել աշխարհը, այլև ներկայացնել ուրիշներին:
- Ես նույնպես մեդիա ստեղծող եմ, որովհետև կարող եմ նկարել, պատմել, մշակել, ... ու դա ինձ դուր է գալիս:
- Այլ...

Լուրբերիկ

Փաստճշտիկ

Հարցդարձիկ

ԾՈՒՏԱՍԵԼՈՒԿՆԵՐ

Մաղով միսը աղացի,
Մսաղացով՝ ալյուրը,
Եվ ճոխ սեղան բացեցի,
Երբ պատրաստ էր ապուրը։
Որդիս կերավ՝ հավանեց,
Ասաց. «Համեղ ճաշ է սա,
Վաղն էլ կեփես մի կաթսա
Ձմերուկով հարիսա»։

Ես մի անգամ Սևանում
Տեսա հսկա կապույտ կետ.
Երգում էր ու լողանում,
Խաղում էր մեծ նավի հետ։
Վերջն էլ նավին կուլ տվեց,
Իջավ ջրի խոր հատակ.
Սա ո՛չ սուտ է, ո՛չ կատակ։

Մի օր կանաչ բացատում
Նապաստակն էր
թռչկոտում։
Եղջյուրները իր սրեց
Ու ինձ վրա հարձակվեց։
Ես ուշաթափ վայր ընկա
Մռնչոցից կատաղի։
Ես ոչինչ չեմ հնարել...
Չե՞ք հավատում, դե՛
հարցրեք
Որսորդներին մեր թաղի։

Քարերի մեջ ցանեցի
Մի քիչ գարի ու կորեկ
Ու աշնանը քաղեցի
Ձմերուկի առատ բերք։
Կատուն սայլին լծեցի
Ու բերքս տուն բերեցի։
Ողջ ձմեռը կուշտ կերանք,
Այ քեզ հրաշք վարուցանք։

Հեղինակ՝
Սուրեն Մուրադյան

Աստղիկ Բալայան

Մեդիագրագիտությունը տարրական ծրագրում

Լուսինե Գրիգորյան

Մեդիագրագիտությունը գրադարանում

Գեղամ Վարդանյան, Օֆելյա Սիմոնյան

Ճանաչել ու դիմագրավել ապատեղեկատվությանը. դեպքերի քննարկում

ISBN 978-9939-1-2252-6
9 789939 122526